

յեղ բարութիւնը, հեղութիւնը, բանաստեղծական հակումներն ու բարոյական առաքինութիւնները: Համաստեղի կերտած հոգիներու մէջ խորը թաքնուած են բարոյական կամ գեղագիտական (էսթետիկ) ձգտումներ:

Իրենց ընտանեկան կամ ընկերային դիրքով Համաստեղի հերոսները կեանքի ամենաստորին աստիճաններու վրայ կը գտնուին զրեթէ միշտ, բայց իրենց հոգեկան թռիչքներով, անսովոր յայդերով եւ որոնումներով անոնք բարձր են իրենց չըջապատէն:

Ամէն մէկ գեղարուեստագէտ ի վերջոյ իր անհատականութիւնն է որ կը զբաւեռէ իր երկերուն մէջ: Ստեղծագործել՝ կը նշանակէ իր հոգիէն կտոր մը փրցնել եւ գեղարուեստորէն մարմնաւորել զայն այս կամ այն արտաքին միջոցով: Նոյնիսկ այն պարագային, երբ գեղարուեստագէտը իրեն նիւթ կ'ընտրէ հեռուոր առարկաներ, որոնք, ըստ երեւոյթին, անմիջական առնչութիւն չունին իր հոգիին հետ, այսուհանդերձ անոնք զօրապէս կը կրեն կերտողի անձնաւորութեան յատկանշական դրոշմը, թէկուզ իրենց ձեւով, ոճով, լուսարանութեամբ եւ շունչով:

Համաստեղի ստեղծագործութեան մէջ, հակառակ իր առարկայական (օբժեկտիվ) նիւթին ու ձեւին, շատ ուժեղ ենթակայական (սուբժեկտիվ) շեշտ կայ: Համաստեղի նկարագրած դէմքերն ու իրերը ոչ միայն իրենց թիփեր հոգեպէս հարազատ են իրեն, այլեւ հարազատորէն կը ներկայացնեն իր աշխարհայեցողութիւնն ու աշխարհազգացողութիւնը: ... Եւ որքան աւելի զօրեղ են անհատականութիւնն ու տաղանդը գեղարուեստագէտին մէջ, այնքան աւելի յստակ եւ իւրայատուկ կերպով կը վերարտադրուին իրերն ու երեւոյթները անոր երկերուն մէջ:

Ամէն օր մենք անտարբերօրէն կ'անցնինք շատ սովորական թուող մարդոց եւ իրերու մօտէն, որոնք յուզիչ, յաճախ ցնցող պատմութիւններ ու գաղտնիքներ ունին իրենց մէջ. եւ սակայն զրեթէ ոչինչ կը նկատենք ու կը հասկնանք: Բայց ահա կու գայ ճշմարիտ արուեստագէտ մը եւ իր սուր, խորաթափանց հայեացքով կ'ընդգրկէ իրականութիւնը, վար կ'առնէ անոր վրայէն սովորական եւ նոյնիսկ ձանձրանալի բաներու վարագոյրը ու երեւան կը հանէ հետաքրքրական եւ յաճախ յափշտակող խորհուրդներ շօշափելի, մատչելի ձեւով, որուն շնորհիւ մենք արգէն կը տեսնենք ու կ'ըմբռնենք յստակօրէն այն, ինչ որ մինչ այդ մենք չէինք տեսած, թէեւ միշտ մեր աչքի առջեւ էինք ունեցած:

նաստեղծական հակումները ու բարոյական առաքինութիւնները: Համաստեղի կերտած հոգիներուն մէջ թաքնուած են բարոյական կամ գեղագիտական ձգտումներ:

Իրենց ընտանեկան կամ ընկերային դիրքով Համաստեղի հերոսները կեանքի ամենաստորին աստիճաններու վրայ կը գտնուին զրեթէ միշտ, բայց իրենց հոգեկան թռիչքներով փարձր են իրենց չըջապատէն:

Այս բոլորին հետ եւ այս բոլորէն վեր է արուեստագէտի մը անհատականութիւնը զոր կը գնէ իր երկերուն մէջ: Ստեղծագործել կը նշանակէ իր հոգիէն կտոր մը փրցնել եւ գեղարուեստորէն մարմնաւորել զայն այս կամ այն արտաքին միջոցով: Նոյնիսկ այս պարագային երբ գեղարուեստագէտը իրեն նիւթ կ'ընտրէ հեռուոր առարկաներ, որոնք ըստ երեւոյթին, անմիջական առնչութիւն չունին իր հոգիին հետ, այսուհանդերձ անոնք զգալիօրէն կը կրեն կերտողի անձնաւորութեան յատկանշական դրոշմը, իրենց ձեւով, ոճով, լուսարանութեամբ եւ շունչով:

Համաստեղի ստեղծագործութեան մէջ, հակառակ իր առարկայական նիւթին ու ձեւին շատ զօրաւոր շեշտ մը ունի ենթակայական ձեւը: Իր նկարագրած դէմքերն ու իրերը ոչ միայն իրենց ախպարներ հոգեպէս հարազատ են իրեն, այլ եւ հարազատորէն կը ներկայացնեն իր աշխարհայեցողութիւնը: Որքան աւելի զօրեղ են անհատականութիւնն ու տաղանդը արուեստագէտին մէջ, այնքան աւելի յստակ եւ իւրայատուկ կերպով կը վերարտադրուին իրերն ու երեւոյթները անոր երկերուն մէջ:

... ամէն օր մենք անտարբերօրէն կ'անցնինք շատ սովորական թուող մարդոց եւ իրերու մօտէն, որոնք յուզիչ՝ յաճախ ցնցող պատմութիւններ ու գաղտնիքներ ունին իրենց մէջ, եւ սակայն զրեթէ ոչինչ կը նկատենք ու կը հասկնանք: Համաստեղի պէս արուեստագէտներն են որ կու գան եւ կ'ընդգրկեն իրականութիւնը, վար կ'առնեն անոր վրայէն սովորական եւ նոյնիսկ ձանձրանալի բաներուն վարագոյրը ու երեւան կը հանեն հետաքրքրական եւ յաճախ յափշտակող խորհուրդներ, մատչելի ձեւով մը, որուն շնորհիւ արգէն կը տեսնենք ու կ'ըմբռնենք յստակօրէն այն, ինչ որ մինչ այդ մենք չէինք տեսած, թէեւ միշտ մեր աչքի առջեւ էինք ունեցած:

Հ. Ե. ՏԷՐ ՂԱԶԱՐԵԱՆ

ԿԵԼԻԿԵԱՆ ԽՈՂԵՐ

Ե. - ՍԻՍ

Ինչ որ ես գիտեմ, ինչ որ ինձ ըսին,
Հին քաղաք մը կար ժայռերու կուրծքին.
Ըսին քէ Աստուած իջաւ երկնքէն,
Ժայռերն հիմ դրրաւ, մաս մ'ալ իր սրտէն:

Ձրգեց կապոյտներ կամարէ կամար,
Ջահի տեղ կախեց արեւներ անմար,
Ծըւէն մ'իր փառքէն շինեց ծիածան
Եւ ինքը դրրաւ անունը «Սիսուան»:

— Ահա՛, ձեզ, ըսաւ, քաղաք արժունի,
Թող վըրան յաւերժ արեւը ծագի.
Ծուխը ցնծութեան հասնի հեռուններ,
Եւ Սիսն ըլլայ միշտ սրտերու հրաւեր:

Եկան արքաներ ու պըսակ դըրին.
Եկան բանակներ պարիսպ կազմեցին.
Աղջիկներ տափով, պարերով ցնծուն
Անցան դաշտէ դաշտ՝ գերդ ծաղկած գարուն:

Ով երազ ունէր՝ դէպի Սիս կ'երթար,
Կարաւանն առջեւն, ուղտերով հագար.
Ոսկին կը ժպտէր նայումսէնքերու տակ,
Ինչպէս նախնիներ փայտաւոր վըրտակ:

Դարպասն ոսկեղէն նստած քաղաքին
Ժըպիտ կը բաշխէր, գանձերն իր սրտին.
Արքան կը հսկէր սահմանն աշխարհին,
Արծիւներու հետ երկնքէն անդին:

Կ'իջնէր տունէ տուն գիշերուան ոգին՝
Խաղաղ նինջ տալու անհոգ մանուկին.
Կ'իջնէր լուսնկան տանիքէ տանիք՝
Որ վիշտը չըտար սրտերուն ալիք:

Եւ եքէ հնչէր փող պատերազմի,
Ռուժք կը դառնային ժայռերը Սիսի-
Ամէն կուրծք՝ վահան, եւ բերդ՝ ամէն տուն,
Գետեր կը բանար քշնամի արիւնն:

Ժայռերու վըրայ, բերդերու մակտին
Քանդակուած է միշտ անունը Սիսին-
Կը դառնայ աշխարհ, եւ մա կը հասնի
Մեր խաչն յանձնելու Աստուծոյ կրկին:

Ձ. - Լ.Ա.Մ.Բ.Ի.ՈՆ

Դուն ալ անցար զերդ վերջին սէ՛րը մարդուն,
Ինչպէս երազն ոսկեգօծուած օրերուն-
Ու մերկ դաշտեր՝ բերկրանքներէն որբացած,
Զեն բարբառիր, չեն յանձնուիր սրտերուն:

Դէմքեր բարի, դէմքեր չփնաղ կոյսերու,
Մոլորափայլ լոկ ըստուերներ քողուցին-
Ո՞ւր հանդիպին աստղ ու լուսին իրարու,
Երբ մանանչներ քախծութեան դէմ կը փշրին:

Աւա՛ղ, երբեմն էիր ինչպէս ոսկի գահ,
Փառքն էր բեհեզ, եւ շափիւղայ՝ դահլիճներ,
Զեռքն ձեռքի՝ հազար ծաղիկ կը սփռէր,
Կը ցոլանար աչք աչքի մէջ սիրաջեր:

Այնտեղ սուրբի մ'երկինք հասնող բազուկներ
Արշալոյսէն աւելի բոց ունէին-
Երկնքի մօտ մզմարան ու պալատ էր,
Սիրելի վայր հարսանեկան երազին:

Ո՛հ, սե՛ւ օրեր, սե՛ւ տարիներ, սե՛ւ մարդիկ,
Որոնց մուրմի հարուածը դեռ կը լսուի-
Ու լակոտներ կը թինչներով ագռաւի,
Տէրն են հիմա աստուածաշէն Լամբրոնի:

(Շար. 2)

Հ. ՎԱՀԱՆ ՅՈՎՀԱՆՆԵՍԵԱՆ

ՕՐԵՐՈՒՆ ԼՈՒՍԱՆՅՔԻՆ ՎՐԱՅ

Հ. ԵՂԻՍ ՎՐԴ. ՓԷՋԻՅԵԱՆ

Ա.

Թողած երկնի մանապարհները փայլուն,
Թափառայած, ի՞նչ գործ ունիս այս տեղումն,
Դեռ մինչեւ ե՞րբ հետեւիս ի՛մ ֆայերուն,
Տեսութեանդ կայք ըրած երազն խաբկանք:

Թո՛ղ աշխարհն այս, դարձիր աստղերն ու լուսին,
Կը լըրանան շուտով օրերս կեանքին հետ,
Կու գամ քեզի, կ'ըլլանք դարձեալ միասին,
Սուրբ Ղազարի կանքեղին լո՛յս վարդապետ:

Բ.

Տեսիլքիս մէջ՝ երիտասարդ էիր, քունդ,
Առոյգ՝ ինչպէս լեռան կաղնին քաւարծի,
Ծովն ափէ ափ կ'երգէր երգն իր խորանդունդ,
Ես՝ քու կողքին, անհոգ տըղեկն երբեմնի:

Միտքն ամէն վայրէ, սերէ՛ լուսավառ,
Յիշեց մախ քեզ, դաշտավայր Սո՛ւրբ Զեռնեան,
Ուր դափի խաղն ընկերներուդ հետ կայտառ
Հոմերական կ'առնէր հըրայք մ'աննըման:

Այսպէս, միմակ, ծովուն առջեւ դող ի դող,
Հասնիլդ տեսայ, մեկնի՛լդ ապա դէպ երկին,
Այգաբացին կը տանէիր խուրճ մը շող,
Լոյսի՛ գաւակ Մըլիքարայ Հըրաշին:

Տեսիլքիս մէջ՝ երիտասարդ էիր, քունդ,
Առոյգ՝ ինչպէս լեռան կաղնին քաւարծի,
Ծովն ափէ ափ կ'երգէր երգն իր խորանդունդ,
Ես՝ քու կողքին, անհոգ տըղեկն երբեմնի:

Պրեկա - Խրուարստան
13 Օգոստ. 1966

ԱՐԱՄԱՅԻՍ ՍՐԱՊԵԱՆ